

### Երաշխիքային սպասարկում

1. "Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ" հիմնադրամը երաշխավորում է Գույքի որակը՝ Հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից 12 (տասներկու) ամսվա ընթացքում (այսուհետ՝ Երաշխիքային ժամկետ) և նշված ժամկետում կատարում դրա երաշխիքային սպասարկման ծախսերը:
2. "Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ" հիմնադրամը չի իրականացնում Գույքի երաշխիքային սպասարկում ստորև նշված դեպքերում.
  - 1) Վարձակալի կողմից թույլ է տրվել շահագործման կանոններում նշված փոխադրման, պահպանման և շահագործման կանոնների խախտում,
  - 2) Վարձակալն առանց "Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ" հիմնադրամի գրավոր համաձայնության կատարել է Գույքի կառուցվածքային փոփոխություններ,
  - 3) ավտոճանապարհային վթարի հետևանքով առաջացած թերություններ և վնասվածքներ:
3. Գույքի թերությունների վերացման պահանջը ներկայացվում է Վարձակալի կողմից՝ "ՓՄՁ ներդրումներ" ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության գրավոր համաձայնությամբ: